

Ներսես Շնորհալի

Տաղեր



eMatenadaran.

Ներսես Շնորհալի Տաղեր

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24431254

Տաղեր:

ISBN 9781772468182

Аннотация

Իբրև քրիստոնեության ջատագով ու պաշտպան՝ Ներսես Շնորհալին ունի կրոնական աշխարհայացք: Նա գտնում է, որ ամեն ինչի նախաստեղծ սկիզբը աստվածն է, բայց հասարակական երեւոյթներին անդրադառնալիս երբեմն դրսեւորում է այլ մոտեցում: Նրա համոզմամբ՝ մարդն օժտված է ազատական գործունեությամբ եւ դրանով զգալապէս ազդում է հասարակական կյանքի վրա: Ուստի եւ, ելնելով ընդհանուր բարօրության շահերից, Շնորհալին հատուկ նշանակություն է տալիս մարդու բարոյական կատարելագործման գաղափարին: Ըստ նրա՝ հանրություն կազմող 5 հիմնական դասերը (հոգեւոր, իշխանական, գինվորական, քաղաքային կամ առեւտրական եւ երկրագործ) կոչված են որոշակի դեր խաղալու հասարակական կյանքում, հետեւաբար պետք է համագործակցեն խաղաղությամբ: Հեղինակը հակառակ է տերերի դեմ ուղղված ըմբոստությանը, ինչպես նաեւ՝ ռամիկների օրինական շահերը ոտնահարող ավատատիրական սանձարձակություններին: Նա ձգտում է կայուն օրենքների եւ

արդարադատության սկզբունքով կարգավորել դասակարգերի
հարաբերությունները:

Содержание

[Ա]	6
[Բ]	9
[Գ]	11
[Դ]	13
[Ե]	14
[Զ]	16
[Է]	17
[Ը]	18
[Թ]	19
[Ճ]	20
[ՃԱ]	22
ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ	24
[ՃԲ]	26
[ՃԳ]	27
[ՃԴ]	28
[ՃԵ]	29
[ՃԶ]	31
[ՃԷ]	33
[ՃԸ]	34
[ՃԹ]	36
[Ի]	37
[ԻԱ]	39

[ɮɤ]	41
[ɮɣ]	42
[ɮɣ̣]	43
[ɮɛ]	44
[ɮɔ]	46
ΦΠΙϚ	48
ΦΠΙϚ	50
ΦΠΙϚ	51
[ɮɛ̣]	52
[ɮɛ̣̣]	54
[ɮɸ]	55
ΦΠΙϚ	56
[ɮ]	58
[ɮU]	60
[ɮɤ̣]	61
[ɮɣ̣]	62
[ɮɣ̣̣]	63
Конец ознакомительного фрагмента.	64

Ներսես Շնորհալի Տաղեր

[Ա]

ՏԱՂ ԱԻԵՏԵԱՅ, ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նոր երկինք յերկրի, արփայն պարունող,
Ծագողին ծագող:

Երբակի ունող աւետեաց ձայնի

Անմահից պետին:

Բոպէիցըն տիպ համայնից հոգուց

Գոլով արեւելք:

Սըրտի սաքրելոյ գթափանցիկ լուսոյն

Ծագելով նըշոյլ:

Էին աննիւթի հիւթ պարունակող,

Նիւթեալ առ ի քէն:

Սիրատունկ ծառոյն սաղարթից բողբոջ

Ի քէն ընձիւղեալ:

Իսկական Բանին գիր քո մելանաւ

Արեամբ պարագրեալ:

Գեղմն ունակ ցաւոյ Գեղէնն ետես,

Երգէ եւ Դաւիթ:

Ուրախ լե՛ր, դըշխոյ, հարսըն պանծալի

Անմահ փեսային:

Վեհին անեղի էից եղակի

Եղակ վերըստին:

Երբին անկէտի կէտ ժամանակեայ,

Սկիզբն անըսկըզբան:

Մաս խընկաբերին, նոր դրախտ Աղենի,

Ծառ կենաց պըտողոյն:

Տիրական որթոյն Հաւր տընկագործի

Երկիր բանաւոր:

Աբրահամին աւետ Սահակաւ տընեալ

Ի քէն կատարումն:

Մառա ամլութեամբ, նորահրաշ ծնընդեամբ

Տիպ քո կուսութեանդ:

Տապանակ կտակի, սափոր ոսկի լի

Նոյն մանանայի:

Վէմ առանց ձեռին ի լեռնէդ հատեալ,

Կոյսդ անհայր ծընեալ:

Անկէզ մորենի Մովսեսի տեսեալ,

Ըզբեզ ծանուցեալ:

Ծընող ծնիցելոյն, անմայրըն յառաշ

Անհայր ծնանելով:

Անըստուեր լուսոյ խորան նոր Սինայ,

Տաճար Սաղիմայ:

Ծիր ծայրագունին, ծաւալումն արփոյն

Յոգիս նըշողից:

Նըստելոյն ընդ Հաւր արքային փառաց

Հուպ մայր մըշտակաց:

Ի բարձունս առ նոյն լեր մեզ բարեխաւս

Սուրբ կոյս Մարիամ:

[Բ] ՓՈԽ

Իմանալի սերովբէ,
Բանին աթոռ քերովբէ.
Խորան լուսոյ արքային,
Հարսըն մաքուր փեսային:
Նոր բուրաստան ծաղկերանգ,
Ողկուզաբեր բարունակ,
Դրախտ Տեառն դարձեալ քեւ տըլաւ
Մարն Եւայի, որ մեղաւ:
Բոտեալ գերկունս տըրտմական,
Փոխադրեցեր ըախճական
Ուրախութիւն երկրայնոցս,
Հարսն ի յերկրէ երկնայնոց:
Մայր կենդանեացըն հոգւոց,
Չոր նախահայրըն ծանոյց.
Երկոտասան վըտակաւ
Վէմն առ ի քէն շնորհեցաւ:
Ծըրար քառիցըն խընկոց.
Հոգւոյն յոգիդ խառնելոց,
Իմաստութիւն, զարութիւն,
Արդարամէտ մաքրութիւն:
Նարդոս, զընտու ծովային,
Եւ կինամոն կընդըրկին,
Թագապաճոյճ զարմագան

Չընրուխտ եւ կայծ կարկեհան:
Ով~ դու քաղաք կենդանի,
Տաճար շինեալ Քրիստոսի.
Բարբուն Բանին Յիսուսի,
Ծընող մարմնով ի յերկրի:
Որով հայցենք մայր լուսոյ,
Զերգող երգոյս եւ զխընդրող,
Սըրբել ըզմեզ ի մեղաց
Լեր բարեխաւս անմոռաց.
Ի գրաւթնոց կայանին
Երգել ըզփառս ընդ նոսին,
Երրորդութեան անեղին
Յաւէտ ի նոյն միշտ Էին:

[Գ]

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՅՄՆ

Նոր ծաղիկ ցուցաւ ի նորատունկ բուրաստանի,

Նոր արեւ հարաւի

Նորագուարձ առաւառի:

Երփնատիպ սաղարթ տերեւախիտ կանաչագուարձ

Հողնով Հոգոյն շարժեալ,

Քաղցրիկ աղով վայրաբերեալ:

Բախճանայ դրախտն Եղեմայ նոր ծառ կենաց տնկեալ ի
նմա

Ի յաբրահամեան

Յեսսեան արմատ դաւթիագարմ:

Սքանչելեալք Կոյսն յղացաւ գեմմանուէլն ըստ
Եսայեայ,

Ծընեալ զՀաւր համագոյն՝

Մեզ համագոյ գոլ ըստ մարմնոյ:

Էն ի միշտ Էէն անժամանակ ծընեալ անմայր,

Նոյն ժամանակաւ

Ի կոյս մարէ անհայր ծընաւ,

Սիրով խոնարհեցաւ ճըշմարտապէս եւ տիրաբար,
Առնուլ ըզմերս մարմին,
Առանց մեղաց մնալ անմարմին:
Սիրով երկըրպագեա՛, եկեղեցի, ծնեալ արքային.
Փառաք գքեզ պսակողին
Մատո ըզփառս միշտ յաւիտեան:

[Դ] ՓՈԽ

Այսաւր ցընծութիւն հողեղինացս,
Եւ աւետիք խընդութեան փըրկողին ծննդեան:
Սա յերկնից իջեալ ի ծոցոյ Հաւր,
Որդի եւ Բան անմարմին՝ եղանի մարմին:
Է զարմանք հրաշից աննիւթ Բանին
Լինել մարմին տիրապէս եւ մնալ անմարմին:
Չանհաս այս խորհուրդ վերին զաւրացն
Շանուցեալ ասէին՝ ըզփա~նս ի բարձունս:
Աստղն արեւելեան զարդարութեան
Եցոյց յայրին զարեգակն ընծայաբեր հովուացն,
Յորմէ սրովբէքն ծածկեալ ըզդէմըս
ՉԵրեքսըրբեանն երգէին. հովիւքն արինէին,
Սարսեալ քրովբէիցն տեսանելով
Չվերանըստեալըն ինքեանց ի գիրկըս Կուսին:
Բանն, որ կերակրէ բանի գհոգիս բանականաց,
Դընի յանբանից մըսուր:
Առած Միքիայ առ Բեթղահէն այսաւր լըցաւ,
Ուստի հացի կենաց կերակրիմք:
Նոր երգս արինութեան անճառ Բանին մարմնացելոյ
Մատուցուք այժմ եւ յալիտեան:

[Ե]

ՏԱՂ ՃՐԱԳԱԼՈՒՑԻ ԾՆՆԴԵԱՆ

Այսար ամենեաց Գաբրիելի լրումն

Եղանի առ կոյս Մարիամ:

Այսար աներբին իննամսեան աճմամբ

Առլըցեալ յարգանդի Կուսին:

Այսար գայ Յովսէփի ի քաղաք Դաւթի,

Ընդ Կուսին յայրն իջավանի:

Այսար երկնային արքայն մըտանէ

Ընդ երկրատր արքային գրոյն:

Այսար ազգ մարդկան վերագրին աշխարհագրան այն

Յաշխարհըն վերին:

Այսար ի Հարէ անմարմին ծընեալ Որդի

Նոյն մարմնով ծընանի:

Այսար Բանն աննիթ թանձրացեալ

Հիթական կերպի յայտնեալ երեւի:

Այսար լուծանի երկունք անիծից նախամարն

Ծնընդեամբ սուրբ Կուսին:

Այսար մեզ Դաւիթ տասնաղեարն տայ նըշանակ.

Գըտաք յԵփրաթայ:

Այսար ըստ Միքիայ Բեթղահէմ գընծայ՝

Տուն եղեալ երկնատր հացին:

Այսար ըստ Եսայեայ Կոյսըն մայր լինի

Սքանչելեալք Էմմանուելի:

Այսաւր հոգեղէնք տան որդւոց մարդկան

Աւետիս._ Ծընաւ ձեզ փրկիչ:

Այսաւր ընդ հովիւսն երգս առեալ գոչենք.

Ասելով՝ ըզփառս ի բարձունս:

[2] ՓՈԽ

Նոր ծաղիկ բողբոսէ այսաւր յարմատոյն Յեսսեայ,
Եւ որդի Դաւթի ծնանի Որդին Աստուծոյ:
Բոպէից Տէրն ամանի արքայ նոր Իսրայելի,
Սրովբէից անտես բնութիւնն տեսանի մարմնով,
Ի լոյսն անմատոյց բնակեալն խանձարբաւք պատի.
Սա անմայր յառաջ ծընեալ, անհայր ծընանի,
Ի բարձունս անբաւ վերնոցն՝ յայրըն պարագրի.
Երեւի տղայ ծերունին, մանուկ հինաւորցն,
Անեղն եղանի այսաւր մարդ ճըշմարտապէս.
Յիր պատկերըն գայ կամաւ կերպարանըն Հաւր,
Սիրով խոնարհի ի մեզ բարձրեալ թագաւորն:
Եկայք գնախատաւն ծնընդեանս վերապատուեսցուք,
Բամեալ մայրութեամբ հաղորդ լիցուք ծնիցելոյն.
Գոհութիւն տացուք նըմին ընդ Հաւր եւ Հոգւոյն,
Սուրբ Երրորդութեանըն փա~ռք յաւիտեանս, ամէն:

[Է]

ՏԱՂ ԾՆԸՆԴԵԱՆՆ ՏԵԱՌՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Այսար ի սկըզբան Բանն, որ ընդ Հար միշտ յեութեան,
Ծընանի մարմնով, անյեղապէս գոյով բնութեամբ:
Այսար ծոցածին լոյսն, որ յառաջ քան գյաւիտեանս,
Ծագեցաւ յերկրի ի կուսական յորովայնէ:
Այսար հինաւորցն Աստուած էակն եղականաց,
Եղանի մանուկ ի գաւակէ Դաւթի ծընեալ:
Այսար յարմատոյն Յեսսեայ բըղխեալ մեզ գաւազան,
Ծաղկեցաւ ծաղիկ կենդանատու տիեզերաց:
Այսար գլոյս փառաց, որպէս գաւթոց արկող զինքեամբ,
Խանձարրաւք պատի եւ յանբանից մըստը բազմի:
Այսար սրովբէիք պարածածկեալ թեւաւ խորհուրդն
Յայտնեցաւ մարդկան ի սուրբ յայրին Բեթղաիհեմի:
Այսար ի հրանիւթ քառակերպեան նըստեալն յաթոռ,
Նըւաստացեալ բառնի ի գիրկըս հողեղինի:
Այսար կերակրողըն համայնից կենդանութեանց,
Կերակրի կաթամբ ի կուսական բըղխեալ ըստեանցն:
Այսար մոգքն աստեղբ յարեւելից եկեալք ի յայրն,
Երկիր պագին՝ ոսկի եւ զընոռ, խունկ ընծայեալ:
Այսար որ հովուէրըն գԻսրայէլ հովիւրն քաջ,
Բացաւթեայ հովիւք երգեն նըմա. Փա~որ ի բարձունս:

[Ը] ՓՈԽ

Նոցին համաձայնեալ եւ մեք ցընծութեամբ
Երգենք ընդ հովիւսն՝ ըզփառս ի քարձունս.
Բախճանամք երկրաւորքս ցընծութեամբ երկնայնոցն,
Սրովբէից անտեսն այսաւր տեսանի.
Ի քարձունս անհասն յերկրի երեւի,
Սոսկալին քրովբէից ի գիրկըս գըգուի.
Ի յայրն իջավանի որ յաթոռ ընդ Հաւր,
Երկնից թագաւորն դընի ի մըսուր.
Եւ խանձարրաւք պատի գլոյս փառաց գգեցեալն,
Բամից մարդկայնոց գայ ի փըրկութիւն:
Գովենք նոր երգով գնորածին արքայն,
Սըմա միայնոյ տացուք այժմ ըզփառս:

[Թ]

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Նոր եղեն բանատր տրնկոյն,
Նոր Ադամն ի քէն հրնոյն նորոզող.
Երկակի դիմառից առիթ
Անքակ միութեան Էին ընդեղումն:
Բենական արփիւ առլըցեալ,
Զմինըն մարմնապէս ծընար վերըստին.
Սիրամարգ ոսկետիպ նըկար,
Տատրակ ողջախոհ, մաքուր աղամնի:
Երեւեալ ծաղիկ գարնայնոյ,
Վարդ, մանիշակ, քըրքում, շուշան վայելուչ.
Սարդիոն, յակինթ, դահանակ,
Յասպիս, կարկեհան, գըմրուխտ, շափիղայ:
Ի տիպ վակասին յեռեալ
Կայծ եւ տըպագիոն նորն Ահարոնի.
Երկնագոյն առդամանուած շար,
Բեհեզ եւ ծիրանի՝ նիւթ նոր խորանիդ:
Բակերտեա համասեռիցս ելք,
Ընդ քեզ վերաբերիլ յառ ի քէն ծագումն.
Գոչելով գեռահիւսակ նուագս,
Երիցն ի միումն յաւէտ միշտ ըզփառս:

[Ժ] ՓՈԽ

Մայր Աստուծոյ Մարիամ,
Դուստրը Դաւթեան թագազարմ.
Ծընար մարմնով գնորն Ադամ,
Որ նորոգեաց զհինն Ադամ:
Աստուածածին դաւանենք,
Զնեալդ Աստուած քարոզենք.
Ընդ հրեշտակին քեզ գոչենք,
Զուրախութիւնն աւետենք:
Խընդա', խորանըդ լուսոյ,
Բերկրե'ա, տաճարդ արեւոյ.
Տընծա', աթոռ Աստուծոյ,
Բարձող Բանին բարձրելոյ:
Երկինք երկնից վեհագոյն,
Քերովբէից գերագոյն,
Ի սրովբէիցըն թեւոյն
Ծածկեալ խորհուրդ ծնիցելոյն:
Անտանելոյն կայարան,
Արեգականն աւթարան,
Ահեղ բոցոյն բնակարան,
Աննիթ Բանին մարմնարան:
Զքեզ տեսանողքըն տեսեալ,
Մովսէս` մորենի ոչ կիգեալ,
Եսայիաս` կոյս յղացեալ,

Եզեկիէլ՝ դուռն աղխեալ:
Լեառն վիմաձին՝ Դանիէլ,
Բլուր կընդըրկի՝ Սողոմոն,
Աղբիւր կընքեալ պահողին,
Պարտէզ փակեալ տընկողին:
Նըման գեղման՝ Գեղէոն,
Դաւիթ՝ իջման անձրեւոյն,
Եւ Միքիաս՝ ըզտեղոյն
Ի Բեթղահէմ ծնանելոյն:
Նոյեան տապան կենարար,
Աբրահամեան տաղաւար,
Կըտակագրին տապանակ,
Անճառ լուսոյն աշտանակ:
Դրախտ Աստուծոյ ծաղկալի,
Նարդոս բուրեալ ի յոգի,
Հովիտ պայծառ շուշանի,
Աղբիւր գետոց քառակի:
Բուրուտ խընկոց անուշից,
Քառաբուրեանըն խառնից,
Չոր ծերունեացըն խըմբից
Չաղաթս խընկեն քոց բանից:
Ի քէն հայցենք, մայր կենաց,
Մաքրել ըզմեզ ի մեղաց,
Հայցմամբ առ Տէրն աշխարհաց,
Որում պատիւ սըրբասաց:

[ԺԱ] ՓՈԽ

Մայր Աստուծոյ Մարիամ,
Դուստրը Դաւթեան թագազարմ.
Ծընար մարմնով գնորն Ադամ,
Որ նորոգեաց զհինն Ադամ:
Աստուածածին դաւանենք,
Զնեալդ Աստուած քարոզենք.
Ընդ հրեշտակին քեզ գոչենք,
Զուրախութիւնն աւետենք:
Խընդա', խորանըդ լուսոյ,
Բերկրե'ա, տաճարդ արեւոյ.
Տընծա', աթոռ Աստուծոյ,
Բարձող Բանին բարձրելոյ:
Երկինք երկնից վեհագոյն,
Քերովբէից գերագոյն,
Ի սրովբէիցըն թեւոյն
Ծածկեալ խորհուրդ ծնիցելոյն:
Անտանելոյն կայարան,
Արեգականն աւթարան,
Ահեղ բոցոյն բնակարան,
Աննիթ Բանին մարմնարան:
Զքեզ տեսանողքըն տեսեալ,
Մովսէս` մորենի ոչ կիգեալ,
Եսայիաս` կոյս յղացեալ,

Եզեկիէլ՝ դուռն աղխեալ:
Լեառն վիմաձին՝ Դանիէլ,
Բլուր կընդըրկի՝ Սողոմոն,
Աղբիւր կընքեալ պահողին,
Պարտէզ փակեալ տընկողին:
Նըման գեղման՝ Գեղէոն,
Դաւիթ՝ իջման անձրեւոյն,
Եւ Միքիաս՝ ըզտեղոյն
Ի Բեթղահէմ ծնանելոյն:
Նոյեան տապան կենարար,
Աբրահամեան տաղաւար,
Կըտակագրին տապանակ,
Անճառ լուսոյն աշտանակ:
Դրախտ Աստուծոյ ծաղկալի,
Նարդոս բուրեալ ի յոգի,
Հովիտ պայծառ շուշանի,
Աղբիւր գետոց քառակի:
Բուրուտ խընկոց անուշից,
Քառաբուրեանըն խառնից,
Չոր ծերունեացըն խըմբից
Չաղաթս խընկեն քոց բանից:
Ի քէն հայցենք, մայր կենաց,
Մաքրել ըզմեզ ի մեղաց,
Հայցմամբ առ Տէրն աշխարհաց,
Որում պատիւ սըրբասաց:

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Անճառ է խորհուրդ սրբոյ յայտնութեանն.
Բանն, որ ի ծոց Հաւր ծընեալն անմարմին,
Գրթացեալ ի մեզ, մարմին ըզգեցաւ`
Դարձումն առնելով նախաստեղծ մարդոյն:
Երանեն այսար մեզ ազգ եւ ազինք,
Զարք հոգեղինացն յերկիր ծաւալին`
Էմմանուելի գուշակ լինելով:
Ընդ մեզ Աստուած շրջեցաւ մարմնով,
Թագաւոր փառաց` ծառայի կերպի:
Ժամանակ եհաս փրկութեան մարդկան,
Իջեալ ի յերկիր Որդին միածին,
Լոյս փառաց ծագեաց իւր արարածոցս:
Խաւար լուծանի երեւմամբ լուսոյն,
Ծագի արեգակն ի Բեթղահեմէ,
Կոչէ գտիեզերս ի լուսաւորիլ:
Հովուացն ընթացեալ ի տեսիլ լուսոյն,
Զայնակից եղեն վերին գլուարթոցն:
Ղամբար լուսափայլ յայտնեալ ի յայրին,
Ճառագայթ ծագեաց աստղըն յարեւելս:
Մոգուցըն տեսեալ, նըմին հետեւեալ,
Յայրն իջավանեալ տեսին գարեգակն,
Նըմա մատուցին զընծայս խորհրդոյ,
Շարժեալ իմաստիւք զընուոս մահացու,

Ոսկի՝ արքայի, կրնդրուկ՝ Աստուծոյ:
Չնաշխարհիկ գոլով աճմամբ մարդկութեան,
Պարագայց լրութեամբ թիւ երեսնամեայ,
Զրով Յորդանանու այսար զմեզ սրբբեաց:
Ռահ հորդեալ յերկինս որդոց Ադամայ,
Սարսէր Յովհաննէս մերձենալ ի հուրն:
Վերնոց ահաւորն խոնարհի մարդկան,
Տէր Հոգին իջեալ կերպի աղանոյ,
Բաբունից ըաբունն Հայր վրկայելով,
Տուցեալ յայտնեցաւ սուրբ Երրորդութիւն,
Իիսեալ միութեամբ անբաժանելի:
Փառաց, միշտ Էին փառատրելոյն,
Քահանա՛յք, երգով մատուցուք ըզփառս:

[ԺԲ]

ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ], ՏԵԱՌՆ
ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅ

Ծագումն յարփոյն, ը~, փառաց
Փայլեալ, ը~, յարարածս եւ լուսաւորեաց:
Լոյսն, որ ի սկըգբանէ աշխարհի,
Վերըստին հաստատի դարձեալ:
Դարձեալ նոր Իսրայէլ ի Քրիստոս, ը~,
Հաւատոյ սեամբ լուսաւորի:
Զլոյս մեծ գիտութեան, ը~, տեսին, ը~,
Ժողովուրդք՝ որք ի խաւարի:
Խաւար ստուերին արինացն փոխեալ, ը~,
Տեղի ետ լուսոյն ճըշմարտի:
Ճըշմարիտ Մելքիսեդեկ, անմայրն յառաջ,
Այսաւր անհայր ծընանի:
Ծնընդեամբն, որ ի Կուսէն,
Զարեւնըս բընութեան ելոյծ ըզմնելոց:
Ծնեալքս յապականութիւն ցընծամըք
Ծընընդեամբ անապականին:
Անապական կուսածին Որդին
Զանապական շնորհեաց մեզ ծընունդ:
Ծընեալք աւագանան,
Ըզծընեալն ի Կուսէն փառաւորեցէք:

[ԺԳ] ՓՈԽ

Երգ նոր անտեսաց բարբառ այսաւր մեզ հընչեաց,
Բաբունն երկնային դասուց զաւրաւք յայրն իջեալ:
Գոչէր Գաբրիէլ հովուացն այսաւր._ Յընծացէ՛ք,
Նոր ծընաւ փրկիչ աւծեալ ի քաղաք Դաւթի:
Երկինք երկնայնովք տաւնն ըզծընունդ փրկչին,
Բոպէից քառից կուսից լոյս ծաւալեցաւ:
Սոսկացեալ խընքից մոգուցն ընդ փայլումն աստեղն
Ի յերկրրպագել ծնելոյն եկեալ ընծայիւք:
Սարսեալ շերովդէս դողայր ընդ լուր արքային,
Ի խընդիր մահու շարժեալ կենաց տրտողին:
Արեամբ անմեղաց մանկանց լընոյր զԲեթղահէմ,
Յառաջեալ տրղայք վրկայք տրղայացելոյն:
Սոցին համաձայն լերուք, մանկունք Սիոնի,
Էին ծնիցելոյ Բանին տուք միշտ արիւնութիւն:

[ԺԴ]

ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ], ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Աստուծոյ ողորմութեանցն ազդեցումն
Յառաքումն միածնին Հաւր ի յերկիր,
Համբաւ ահեղ երեւեցաւ յաշխարհի
Առ ի քէն, Երուսաղէմ, քաղաք Դաւթի:
Թագաւորք եկին առ քեզ ահաւորք,
Եւ գաւրաւք պատեն ըզդրունքս քո, Սիոն.
Աստղ ունին փայլատակող՝ առաջնորդ,
Յարեւելից գան ի հարաւ փութապէս:
Արքայի ծընիցելոյ են ի խընդիր
Եւ սիրով նըշան հայցեն բերել ի մէջ.
Ո՛չ կարես թաքուցանել, ո՛վ սուրբ քաղաք,
Զի յերկնից է տեսութիւնն, գոր ուսան:
Փութա՛, հա՛րց ըզմարգարէն, որ եւ ասէ՛
Ուր ծընանի արքայն հրէից կուսածին.
Ի բարբառոյ խուժադուժիցն անտեսաց
Խռովեցաւ Երուսաղէմ եւ Հերովդէս:
Յիրաւի դու խըռովիս, ո՛վ Հերովդէս,
Զի երկնաւոր արքայն իջեալ բառնայ գթագդ.
Որոյ իւր են յաւիտեանքն ըստ Յակոբայ,
Նա կանգնէ գաթոռ Դաւթի յաւիտեան:

[ԺԵ] ՓՈԽ

Իսկ դու ընդէ՞ր ես խոովեալ, Երուսաղէմ.
Հակառակ քո փրկութեանըդ վարանիս,
Չի յագգէ արբահամեան է շառաիդն,
Եւ յարմատոյն Յեսսեայ ծաղկեալ է գաւազանն:
Երանեն, քեզ երանեն, քեզ երանեն,
Ամենայն ազգ եւ ազինք քեզ երանեն.
Քեզ փրկիչ եւ ազատիչ յայտնեալ այսաւր,
Եւ մեզ պարտ է այնըր լուսովըն գարդարիլ:
Դու խընդա եւ գուարճացիր, Երուսաղէմ.
Ուրախացի՛ր բերկրեալ, ցնծա՛, մայրաքաղաք.
Չայն աւետեաց հրնչեաց յերկնից առ ձեզ, մարդիկ.
Ելէք տեսէք ի Բեթղահէմ՝ զըսքանչելիս:
Հրեշտակաց իմն է բարբառս այս սոսկալի,
Եւ գաւրաց երկնատրացըն՝ շուրջ գայրին.
_ Աւրհնութիւն Հաւր ի բարձունս, _ երգեն գուարթունք, _
Եւ յերկիր խաղաղութիւն որդոց մարդկան:
Մեծարի այսաւր Կուսիւն մայրըն Սառա,
Պայծառանայ հայր Աբրահամ սուրբ ծերունին,
Չի աւետեաց Որդին եկեալ հիր առ նմա
Հաղորդս առնել ուրախութեան ընդ գաւրս երկնից:
Որք Էաք մեղաւք կապեալ ի յԱդամայ,
Քրիստոսի արձակեցաք ի կապանաց,
Եւայի դատապարտեալ ազգըն կանանց

Մարիամաւ ազատեցան ի յանցանաց:

Ընդ նոսին համաձայնեալ ուրախութեամբ.

Երգենք եւ մեք Տեառն Աստուծոյ. Փա~ղբ ի բարձունս:

[ԺՉ]
ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ],
Ի ՆԵՐՍԻՍԷ

Այսաւր աւետեաց ձայն եհաս ի յունկն Եւայի,
Եւա՝ առաջին կոյս, ցնծայր դրստերբ Կուսին,
Կուսին խընդութեան լուր գրւարթունն իջեալ գոչէր,
Գոչէր Գաբրիէլ. «Որախ, ը~, լեր, բերկրեալե:
Բերկրեալ ցընծայր Կոյսն աւետեաւք հրեշտակապետին,
Հրեշտակըն գարհուրէր՝ տեսեալ ի նմա գառաքողն,
Չառաքողն առաքեալն ծաննեալ յառաջ եկեալ,
Եկեալ հուրն, որ ի մորենին վառեալ ոչ այրէր:
Ոչ այրեալ, այլ սրբեալ ինքեան տաճարացոյց,
Տաճար հոգեւոր ի Հոգւոյն, ը~, նախ մաքրեալ,
Մաքուր խառնարան գինւոյն իմաստութեանըն Հաւր,
Հաւր մըշակեալ որթն անդ տընկեալ արմատացաւ:
Յարմատոյն Յեսսեայ գաւազան, ը~, ծաղկեցաւ,
Ծաղիկ կուսածին, ձըմերան հալածող գարուն,
Գարուն հոգեւոր աշխարհի յայտնեալ ճըշմարիտ,
Ճըշմարտութիւն յերկրէ ի Կուսէն բուսաւ պըտտող:
Պըտտոյն առաջնոյ մահ լուծաւ կենացըն պըտտող,
Պըտտող անմահին ծառոյ տուաւ մեռեալն Ադամայ,
Ադամ վերըստին եմուտ ի դրախտն Եւայի,
Եւա պարէ այսաւր ծնանելով զԱստուածորդին:
Որդին, ծածկեալն առ Հաւր, այսաւր յայտնի մարմնով,

Մարմնով անմարմին Բանն մարդկան փրկող եկեալ,
Եկեալ մրկբրտել Յորդանան ի Յովհաննէ,
Յովհաննէս հրաժարէր. «Ինձ պարտ է ի քէն մկրտիլ,
Տէ՛րե:

Տէր լուսոյն լոյս զգեցեալ, որ ըզգեցոյց մեզ ըզլոյս,
Լուսափայլ Հոգին գայր աղաւնակերպ յերկնից,
Երկնիցըն փակեալ դրունք եղեն բացեալ այսաւր,
Այսաւր գմարմնացեալ Բանն Հայր՝ Որդի դաւանէր:
Դաւանենք ընդ նրմին Էակից Հաւր գՈրդի,
ԶՈրդի եւ զՀոգի ընդ Հաւր անճառ, ը~, միութեամբ.
Միոյ տէրութեանն յաւէտ նըւագենք ըզփառս,
Փա~ոք երից միոյ միշտ, այժմ եւ յաիտեանս, ամէն:

[ԺԷ] ՓՈԽ

Բարբառ անտեսաց ձայնի
Գաբրիել գոշէր սրբբուհոյն.
_ Առ քեզ առաքիմ, մարուր,
Պատրաստել տեղի տէրունոյն:
Նըրագ ցրնծութեան երգենք.
_ Ուրախ լե՛ր, բերկրեալ, Տէր ընդ քեզ:
Նորոգի երկիրս այսաւր
Յառաջին մեղաց հնութենէն,
Երկինք երկնայնովք հանդերձ
Ընդ մարդկան տան փա~ռք ի բարձունս,
Բամեալ միանան սիրով,
Հաշտութեամբ Հաւր ընդ արարածս:
Սարտեալ յողջունէն սուրբ Կոյսն,
Հաստատէր բանի հրեշտակին.
Ի տուն Չաքարիայ երթայր
Ի յողջոյն Եղիսաբեթին,
Սիրով գլուր բանին լուեալ,
Եւ խայտայր ձայնն յորովայնին,
Ի բերան ծերոյն ամլոյ
Աւրհնութիւն տայր պըտողոյ Կուսին:
Երգենք ընդ մեծին ի ծնունդս.
_ Փըրկողիդ փա~ռք եւ զաւրութիւն:

[ԺԸ]

ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ], Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Լոյս փառաց Էին ծագողին ծագումն,
Չարութիւն գաւրին, իմաստութեանն իմաստ,
Բան բերող խորհրդոյ
Դէմ անձնատր կատար:
Կատարումն Էից յանգոյից գոյակ.
Նախեղակ վեհից իմանալեացըն խումբ
Ստորակայ տարրից, ը~, քառիք,
Յորոց միութեան, ը~, պատկեր՝ տիպ անըմանոյն նըման:
Նըման միայնում սկըզբնատպին գեղոյ,
Խաւարին խաբմամբ փոխակերպեալ ընդ լուսոյ
Պըճնից, ը~, խաւար մերկացեալ
Ըզպատմուճանն անճառ փառաց:
Փառաց թագաւորն յայց ել պատկերին,
Գըտեալ յարգանդի անապական Կուսի,
Խանդակաթ, ը~, սիրով գըրկեալ համբորի
Ըզխատնեցելոյ բնութեանն:
Զբնութիւն հողանիւթ ստուերամած կերպի,
Լուսափայլ պըճնիւք փառագարդեալ
Աստուածատեսակ, ը~, հրաշիւք ծընանի մարմնով, ը~,
Յիջավանեալ յայրին:
Յայր Բեթղահեմի, ի տուն Եփրաթայ,

Ի քաղաք Դ-աթի հրեշտակերամ դասուց,
Ստոր իջեալ պարեն ընդ հովիւսն աւետաքարոզ, ը~,

– Փա~ոք ի բարձունս, երգով:

Երագեալ մոգուցն աստեղբ նըշանաւ,

Եկին ի խընդիր արեգականն արդարութեան
խորհրդեան, ը~,

Բերմամբ ոսկի եւ կընդրուկ, զընուո

Ընծայեալ նուէր:

Ընդ նոսին եւ մեք ընծայ հոգետր մատուցուք

Մընդեան թագաւորին մերոյ

Ըգհաւատս, եւ ըգոյս, ըգսէր`

Ի ձայն ցընծութեան երգել նըմա ըգվառս:

[ԺԹ] ՓՈԽ

Նոր թագաւորին անժամանակ ծընեալ Բանին
Եկայք երկիր պագցուք եւ ընդ մոգուցն ընծայեսցուք,
Բամեալ գհոգի, գմարմին, գմիտըս տացուք երբեակ
անձին:

Սիրով խոնարհելոյն մաքուր հոգով տաճարասցուք,
Ի սիրտըս գրգուեսցուք, որպէս ի գիրկսըն՝ Սիմէոն:
Ստասցուք տիպ արինակ գանարատ կոյսըն Մարիամ
Ի նոյն նըմին նըման տաճար լինել Երրորդութեանն:
Երգով համաձայնեալք հոգեղինացն, որպէս հովիւքն,
Բաբունաբար գիմաստ իմաստութեան Հաւր ընծայեալ՝
Գըլխոյն եկեղեցոյ յառեալքս ի նոյն տացուք ըզփառս:

[Ի] ՏԱՂ ԾՆՆԴԻ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Տիրուհի սուրբ Կոյս, մայր մարմնացելոյ Բանին,
Մաքուր կուսութեամբ ծընար տրդայ ըզՏէրն,
Տաճար հոգետր թագաւորին երկնից,
Առաքեցելոյն ի հայրական ծոցոյ:
Բաբունին էից իմաստութիւնն Հար,
Առ քեզ խոնարհեալ շուշանափայլ հովիտ.
Բախական բայիք երգաբանեալ գոչեմք.
_ Հարսն երկնից դըշխոյ, ուրախացի'ր բերկրեալ:
Տընծութիւն կուսից աւետաբեր կանանց,
Բաց լուծանելով զանիծաբեր երկունս.
Տաղ ի Հերմոնէ վայր ի Սիոն հեղեալ,
Գեղմն իմանալի ի քեզ իջեալ Հոգւոյն:
Հինաւորցն Աստուած մանուկ ի քէն յայտնեալ,
Մորենի վառեալ զքեզ Մովսեսի տեսեալ,
Հիւսակ հոգետր եաւթնարփեան շնորհաց
Չահ վառեալ լուսով Չաքարիաս ետես:
Փունջ վարդից յեռեալ անուշահոտ հոգւով,
Խընկաբեր հովիտ, զընոտ եւ տաշխ հալուէ,
Փառաց թագաւորն քեւ ի տաճարն եկեալ,
Սիմէոն ցընծայր քառասնարեայ մանկամբն:
Քառակերպ աթոռ սուրբ ծերունին զըտաւ`

Ի գիրկս իւր բարձեալ գի քերովբէս նըստեալն:
Քրիստոսի փրկչին ընդ ծերունոյն գոչեմք.
_ Արձակեա՛ եւ գմեց ի կապանաց մեղաց:

[ԻԱ] ՓՈԽ

Անճառ Բանին բարձրելոյն
Երկըրպագեն քերովբէք,
Որ միշտ ընդ Հաւր եւ Հոգոյն
Փառաբանի յանմահից:
Անճառելի խորհրդոյով
Նըւաստացեալ տեսանիւր,
Կոյս կուսական ծընընդեամբ
Զկանանցն ելոյժ գղատակնիք:
Ծընաւ ծընեալն ի Հաւրէ,
Զմեզ ազատեաց յանիծից,
Կեանք ի կենաց յայտնեց.
Մեզ կեցուցիչ եւ փրկիչ:
Իջավանի ի յայրին
Այն, որ անտեսն է վերնոցն,
Ի խանձարորս պատեցաւ,
Լուսով ըզմեզ զարդարեաց:
Կաթամբ Կուսին կերակրի
Հացըն կենաց անմահից,
Մըսուր եդաւ յանբանից
Անպարագիրն ի յէից:
Հովուացն եկեալ ի տեսիլ
Փառաց լուսոյ անեղին,
Ձայնակցելով ընդ վերնոցն`

Փա~ռք ի բարձունս, երգէին:

Մոզքն ընծայիք կանխէին

Ի փառս ըզմեզ փրկողին:

Ընդ որս եւ մեք գոչեսցուք.

_ Փա~ռք ծնընդեան Քրիստոսի:

[ԻԲ]

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Էին միայնոյ միածին Որդին,
Ծրնեալն յառաջ քան ըզկէտ ժամանակի սկըզբանց:
Սկիզբըն համայնից յանէից էից,
Պատճառ ստեղծողն անտարրից եւ տարրեղէն գոյից:
Գոյին պատկերի կորուսեալ դրամին
Իջեալ՝ այց առնելով ծառայական կերպի:
Կերպարանըն Հաւր ի կերպի եղեալ
Ադամայ՝ գնոյն վերաստեղծեալ վերածելով ի փառս:
Փառաց թագաւորն, որ նըստի ընդ Հաւր յաթոռ,
Ծրնեալ ի Կուսէ եւ ի նըստր բազմեալ:
Բազմի եւ ի գիրկըս դըստեր Դաւթի,
Տղայապէս կաթամբ կերակրի՝ որ կերակրէ գաշխարհս:
Յաշխարհի ծագաց սոգք ընծայաբերք եկին,
Աստեղբըն տեսին գանտեսական ըզլոյսն:
Լոյս փառաց ծագեաց բացաւթեայ հովուաց,
Հրեշտակք պարակցեալ մարդկան՝ փա~ որ ի բարձունս
երգեն:
Երգենք ընդ նոսին եւ մեք զուարճալի ձայնիւ.
_ Փա~որք նորածին թագաւորիդ մեծի:

[ԻԳ] ՓՈԽ

Նորահրաշ ծնընդեան քո, Տէ'ր,
Ընդ սոգուցն երկրրպագենք,
Երկնատր հովուիդ երգենք
Ջերգս հովուացն՝ փա~ռք ի բարձունս:
Բաբունույդ աշակերտեալքս
Ընդ հրեշտակս այսաւր պարենք,
Սրովբէից համաձայնեալ՝
Յայտնութեամբ քո, Տէ'ր, ցընծամք:
Երեւելոյդ ի փրկել
Քեւ փրկեալքսս պաղատիմք.
_ Սրբբեա' ըզմեզ ի մեղաց
Կենարար քո սուրբ ծնընդեամբ.
Ի փա'ռքս վերաբերեա
Աղաչանաւք Աստուածածնին:
Եկեալ նորոգող փրկչիդ
Նորոգեալքս երգենք ըզփառս:

[ԻԳ]

ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ], Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Սկսեալն յանըսկիզբն ի Հաւրէ անժամանակ Որդին,
Որդին անըսկիզբն առեալ ըսկիզբն ի Կուսէն մարմնով.
Մարմնով պարագրի արկողն որպէս զաւթոց ըզլոյս,
Լոյս փառացըն Հաւր ի մըստօր խանձարբաւք պատեալ
բազմի.

Բազմի եւ ի գիրկս Կուսի ի քերովբէից բարձեալն,
Բարձողըն կարեաց էից կերակրի կաթամբ Կուսին.
Կոյսըն մայր եղեալ հրաշիւք զբնութեանս ելոյծ զաւրէնս,
Արինաց տըտողն ենուտ ընդ արինաւք ծնընդեան.
Ծնընդեան արքային աստեղբն մոզքն ընծայաբերք եղեն,
Եղեն եւ հովիւք դասուց հրեղինաց համաձայնեալ:
Համաձայնելով եւ մեք երգեմք՝ փա~ոք ի բարձունս.
Ի բարձանց իջեալ փըրկչիդ տացուք յաւետ ըզփառս:

[ԻՆ] ՓՈԽ

Տէր փառաց անճառ ծընեալն յառաջ քան գյաւիտեանս,
Նոյն ծընաւ այսար ի Բեթղահէմ քաղաք Դաւթի:
Բաբունն երկնային իմաստութիւնըն Հար եւ բան,
Յանբանից մըստօր ի խանձարուրս պատեալ դընի:
Նըստեալն ի քրովբէս յաթոռ փառացըն հինաւորցն,
Ի գիրկըս Կուսին տըղայապէս բազմի մանուկ:
Երկնաւոր գաւրացըն թագաւոր մեծ եւ յաղթող,
Յամպ թեթեւ նըստեալ, ի յԵգիպտոս փախչի կամաւ:
Բամից համայնից ստեղծող եւ Տէր, անտես վերնոցն,
Յերկրի երեւի եւ ընդ որդոց մարդկան շըրջի:
Սրովբէից թեւաք պարածածկեալն ի սուրբ սըրբոցն
Խոնարհեալ հայցէ ի ծառայէն իւր մըկըրտիլ:
Եկեալ հուրն Աստուած Յորդանանու յորձանսն իջեալ,
Ջրով կիգու ըզմեղս աղամային բնութեան մարդկան:
Սարսեալ ամլորդոյն ի կիզանող ահեղ բոցոյն,
Հրածարէր մերձիլ ի ճառագայթն անճառ փառաց:
Ի բարձանց Հոգին աղանակերպ էջ առ նըմա,
Մատամբ ցուցանէր գծածկեալ մարմնով բնութիւնն
Աստուած:
Երկնից դրունք բացան, այն գոր փակեաց մեղաւք Ադամ,
Հար բարբառ հընչեաց._ Դա' իմ Որդի, դըմա'
լուարուք:
Սուրբ Երրորդութեան երից անձանց խորհուրդ

յայտնեալ,

Ձոր փառատրենք անլրոելի ձայնիւ երգով:

Այժմ եւ հանապազ ընդ Հարս գՈրդի գովենք Հոգովն,

Միաստուածութեան տացուք ըզփառս միշտ
յաւիտեան:

[ԻԶ]

ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ], ՏԵԱՌՆ
ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Այսաւր ցընձան դասք հոգեղինացն
Ընդ փրկութիւն հողեղինացս:
Այսաւր ցընձայ Ադամըն հին՝
Նոր Ադամաւ նորոգելով:
Այսաւր ծընձայ կոյսն առաջին
Երկրորդ Կուսին ծընեալ գԱստուած:
Այսաւր իջեալ բանակք անմարմնոցն
Տան աւետիս մարմնատրացս:
Այսաւր գոչէր հրեշտակապետն.
_ Ուրախ լերուք եւ ցընձացէ՛ք,
Դասք երջանիկ ընտրեալ հովուացն.
Ծընաւ այսաւր ձեզ փրկութիւն՝
Տէր եւ աւժեալ Հաւր միածին
Ի Բեթղահէն քաղաք Դաւթի:
Փութացարուք յայրն երկնանման
Ի տեսանել գհովիւրն քաջ,
Որ ի լընուլ գթիւ հարիւրոց

Իջեալ ի գիտ սուրբելոցս,
Երգենք նրմա՝ փա~ռք ի բարձունս:

ՓՈԽ

Այսաւր ցընծայ տունն արբահամեան
Աւետաբեր Որդւոյն ծնընդեամբ:
Այսաւր ցընծան դասք նահապետացն,
Լըրմամբ ուխտին թըլփատութեան:
Այսաւր ցընծայ Մովսէս արինաւըն՝
Տեսանելով գլրունն արինաց:
Այսաւր ցընծան հոյլք մարգարէիցն՝
Տեսեալ ըզմարգարէացեալն:
Այսաւր փողէ դաւթեան քընարն.
_ Գըտաք ըզնա տուն յԵփրաթայ:
Այսաւր գոչէ մեծն Եսայիաս.
_ Ընդ մեզ Աստուած Կոյսըն ծընաւ:
Այսաւր հընչէ յայրըն Միքիաս.
_ Ծընցի իշխան ի Բեթղահէմ:
Այսաւր խայտայ ձայն բարբառոյն՝
Որպէս երբեմն յորովայնին,
Այսաւր ցընծայ մեծ Կարապետն՝
ԶԱստուած եկեալ տեսանելով:
Այսաւր գոչէ յանապատէ.
_ Ձեզ աւետի~ք, որք յԱդամայ.
Տէր գայ, հըզաւորըն զաւրութեամբ,
Վանէ զկարծեալըն զաւրութիւն,
Մերձ է երկնից արքայութիւն,
Պատրաստեցէք յոզիս շափղ:
Թագաւորին երկնաւորի

Լերինք եւ բլուրք խոնարհեցան,
Խորք անդրնդոց բարձեալ լըցցին:
Իսկ դու ցընձա՛, գետ Յորդանան,
Զի գարհուրեալ անդրէն դառնաս,
Արագ փութա՛ այսրէն ի նոյն,
Ծափ ըզժափի հարցես ձեռամբ,
Յորդ վըտակաւք խաղա՛ գրւարթ,
Ել ընդառաջ ալեաւք խորոց,
Երկըրպագեա՛ արարողին.
Գայ մըկըրտիլ հուրն Աստըւած՝
Լըւանալով գմեղս Ադամայ,
Զախէ ի քեզ գգլուխ վիշապին:

ՓՈԽ

Այսաւր անմեղըն մըկըրտի,
Զի գմեղուցեալքըս սըրբեսցէ:
Այսաւր ստեղծողըն ձեռնադրի
Խոնարհութեամբ յարարածոյն:
Այսաւր Հոգին աղանակերալ
Էջ՝ վըկայեալ իւր Էակցին:
Այսաւր փակեալ դըրունք բացան,
Եւ հինաւորցն Աստուած յայտնեալ:
Այսաւր հընչեաց Հայր ի բարձանց.
_ Դա՛ Է Որդի իմ սիրելի,
Բան եւ ծընունդ եւ ճառագայթ,
Լոյս ի լուսոյ, կեանք ի կենաց,
Իմաստութիւն եւ գաւրութիւն,
Սկիզբն սկըզբանց անժամանակ,
Արարչակից եւ գոյակից,
Միով բնութեամբ՝ ոչ բաժանեալ,
Իջեալ յինէն՝ ոչ հեռացեալ,
Մարմին առեալ՝ ոչ փոփոխեալ:
Դընա՛ լուարութ, որդիք մարդկան,
Դա՛ ճանապարհ ճըշմարտութեան,
Ելէ՛ք ընդ նոյն առ իս յերկինս:

ՓՈԽ

Այսաւր Հոգւովն ել յանապատ
Տէրըն՝ փորձիլ ի փորձողէն,
Այսաւր երկրորդ Ադամ պահեալ
Պարտեաց գյաղթող հնոյն Ադամայ:
Այսաւր պահաւք քառասնաւրեայ
Կանգնեաց զանկեալըն ճաշակմամբ:
Այսաւր ցընծամք որդիք մարդկան,
Զի ետ կոխան գաւձն առաջին:
Այսաւր տանենք ուրախութեամբ
Զար աւետեաց ազատութեան:
Այսաւր եկայք, հաւատացեալք,
Տացուք փրկչին շփառս յաւիտեան.

[ԻԷ]

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ

Քառանիփիցրս Աստուած եւ աննիփիցն
Անեղ յեութեան ծածկեալըն ի ծոց Հաւր,
Փրկող ծագեցաւ ի լուսոյ մեզ լոյս,
Բան բովանդակեալ յորովայնի Կուսին:
Իիօթի Սուրբ Հոգոյն տնաւորինաբար յղացեալ
Չհինաւորցն Աստուած ծընանելով մանուկ,
Յուցաւ ի մարմնի եւ ցընծացաւ երկիր,
Պանծացաւ Եւա՝ զԱստուածորդին ծընեալ:
Բաբունին բազմեալ ի յանբանից մըսուր,
Պար առեալ հրեշտակք ընդ բացաւթեայ հովուացն
Տան փա~ռք ի բարձունս, յերկիր խաղաղութիւն,
Աւետիս մարդկան ընդ հաշտութեանըն Հաւր:
Վերնական աստեղբըն հրաւիրեալ մոգուցն
Ընծայաբերիլ թագաւորին նորոյ.
Սարսեալ Հերովդէս ընդ համբաւ Մանկանն,
Մոլեգնեալ լընոյր արեամբ ըզԲեթղահէմ:
Ռահ հորդէր Յովսէփ ըստ հրեշտակին տեսեան,
Մանկամբն եւ Կուսի փախչէր ի յԵգիպտոս.
Չահ լուսոյն դարձեալ ի Նագարեթ բնակէր,
Ծածկէր զճառագայթն երեսնամեայ լըրմամբ:
Պարագրեալ մարմնով ի Յորդանան եկեալ.
Չհընոյն Ադամայ լուանալ պարտեացն ըզգիր.
Չառնոյր Յովհաննէս ըզմըկըրտելն ի յանձն,

Խոնարհէր փրրկիչն՝ իջանելով ի ջուրսն:
Որդին կուսածին յամլորդոյն ձեռնադրեալ,
Ձայնէր Հայր յերկնից. _ Դա՛ իմ Որդի ընտրեալ:
Շնորհատու Հոգին աղանակերայ իջեալ,
Հանգչէր ի վերայ մարմնացելոյ Բանին:
Նա սկիզբն առնելով սրկրրտութեան նորոյ,
Ի հոր եւ Հոգի սրկրրտելով ըզմեզ,
Յաղթէր բնակելոյն վիշապ աւծին ի ջուրսն,
Չգլուխ նորին ջախեալ կոխան մարդկան տրեալ:
Մեկնեալ յանապատ չար փորձողին յաղթէր,
Խրատելով ըզմեզ ըզգուշանալ շնորհին.
Ճաշակն ըզմեղաց ապաշխարէր անմեղն,
Անճաշակ եղեալ քառասնաւորեայ սուրբք:
Ղաղեալ բանսարկուն հալածեցաւ ի բաց,
Մատուցեալ հրեշտակք եւ պաշտէին ըզՏէրն:
Ձայնիւ քաղցր երգով համաձայնեալ նոցին,
Արիննեսցուք զեկեալն ի փրրկութիւն մարդկան:

[ԻԸ] ՓՈԽ

Նոյն ինքն անդրանիկըն Հաւր յառաջ քան գարեւ,
Եղեւ անդրանիկ այսաւր կուսական ծնընդեամբն:
Բոպէից քառից ստեղծողն ի նոյն խոնարհեալ,
Սըրբել զԱդամայ գյանցանս ի գետն Յորդանան:
Եկեալ հուրն Աստուած մարմնով մըկըրտիլ ի ջուր,
Սարսեալ Յովհաննէս տեսլեամբն, ոչ իշխէր մերձիլ:
Ի վերուստ իջեալ Հոգին նրման աղանոյ,
Երկնիցըն բացան դըրունք, Հայր յայտնեալ ցուցաւ.
Աղաղակելով գոչէր. «Դա՛ է իմ Որդի
Յինէն առաքեալ յերկիր, դըմա~ լրւարութե:
Սա տաւնից մեզ տաւն, եղբարք, ժողովոց ժողով,
Բոլորից փըրկիչն այսաւր Յիսուս կոչեցաւ:
Արդ, յաւոր տաւնիս այս Տեառն անուանադրութեան
Նրւագ ցընծութեան երգեմք՝ ըզփառս ի բարձունս:

[ԻԹ]

**ՏԱՂ ՔԱՌԱՍՆԱԻՐԵԱՅ
ԳԱԼԸՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ
Ի ՏԱՃԱՐ, Ի ՆԵՐՍԻՍԷ**

Այսար նորահրաշ լոյսն ի յերկնից ծագեալ,

Ծագեալ ի Հարէ լոյս ի լուսոյ ծընունդ:

Ծընունդ էական Աստուած ընդ Հար լոյս քան զարեւ
յառաջ,

Յառաջ քան զըսկիզբն անժամանակ անեղ անմահ
բնութիւն:

Բնութիւն միշտ էակ մին միաձին Բանն, որ ի ծոցըն Հար,
Հար անեղ Որդին անճառելի ամենեցուն ստեղծիչ:

Ստեղծիչն, որ եստեղծ զիս՝ յանէից գոյացուցեալ բանի,
Բանի զարութեամբ կրէ զամենայն արարչական սիրով:

Սիրով խոնարհեալ եկն ի խընդիր իւր հողացեալ կերպին,
Կերպին նախեղակ զոր մահացոյց մահու առիթ պըտտողն:

Պըտտող կենդանի, որ ի սկըզբան Բանն ի Կուսէն նոր
մարդ,

Մարդ ճըշմարտապէս տնաւրինաբար ընդ արինաւք
մըտեալ:

ՓՈԽ

Մըտեալ ի տաճարն այսար աստեալն Աստուած,
Աստուած եւ Տէր սինէական տառիցն:
Տառից արինաց մարգարէից նահապետացըն Տէրն,
Տէր Յիսուս ելից գերանաւետ ուխտ նոր ընդ հարսն
այսար:
Այսար ծերունին գիրկս արկանէր Հաւր ծոցածին լուսոյն,
Լուսոյն անեղի Մանրուլի տղայացելոյ Բանին:
Բանին Հաւր գոչէր աղերսալի արտասուագոչ ձայնի,
Ձայնի աղերսէր. «Լո՛յսդ, որ եկիր լուսաւորել
գաշխարհս,
Չաշխարհս փրկեցեր, արձակեցեր յանլոյծ մեղաց
կապից,
Կապից անիծից եղեր լուծիչ, այժմ արձակեա՛ եւ զիս.
Զի՛ս այժմ արձակեա, զծե՛րս, ի կապէ, ծեր տղայ ծերոյ
ծընունդ,
Ծնունդ անեղ լուսոյ մանուկ տըղայ, Աստուած եւ Տէր,
Քրիստոսն:
Քրիստոս Աստուած, լուր մեզ եւ այժմ աղաչանաւք
ծերոյն,
Ծերոյն աղաւթիւք մեզ ողորմեա՛ քո բանաւոր հաւտիս,
Հաւտի քո փոքու, գոր զընեցեր քո պատուական
արեամբդ,
Արեամբ քո քաւիչ դեղ թողութեան մեղաց շնորհեա՛ եւ
մեզ:
Մեզ այց արա, Տէ՛ր, ընդ սուրբըս քո յայցելութեան ատուրն,

Յաւորն աներեկ մեծի ծագման քո հայրենի փառաւր:
Փառաց թագաւոր, քեզ վայել է փառք եւ պատիւ ընդ
Հաւր,
Ընդ Հաւր եւ Հոգւոյն փա~ռըք, պատիւ միշտ յաւիտեանս,
ամէն:

[Լ]
**ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ,
Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՂԱԶԱՐՈՒ ՈԳԵԱԼ**

Անմահ թագաւորն իջեալ ի վայրըս մահու,
Մահու գերելոց առննել գերէդարձ.
Դարձոյց վերըստին ի կեանս անվախճանս,
Վախճան մահու եւ կենաց ըսկիզբն այսաւր:
Այսաւր կեանքն եկեալ ի Բեթանիայ առ մահն,
Մահուն փախուցեալ որպէս խաւար ի լուսոյ,
Լուսոյն ընթացեալ զհետ մահուն, ը~, խաւարի,
Խաւար ստուերամածըն եղել լոյս անըստուեր:
Ստուերաւ տըրտմութեամբ քոյրքն անկեալ առ ոտըս
Տեառն.

– Տէ՛ր, թէ աստ պատահեալ, կեանքդ եղբարն ոչ
հանդիպիր մահ:

Մահու սիրելոյն կրիք մարդկաբար արտասուէր,
Արտասուաց բըղխումն այն զարտասուսըն բառնայր:
Բառնալ հրամայէր հզարն ըզվէմն առ ի բաց,
Բարձմամբ տապանին այնմ բացան դրունք դըժոխսոց:
Դըժոխք սարսեցին ի ձայնելն առ Ղազար.

– Ղազարէ՛, եկ արտա՛քս, – ձայնէր կոչողն Ադամայ:
Ադամայն կապ մահու լուծեալ ձայնի հըզարին,

Հրգարին գարութեամբ դարձաք դարձեալ ի կեանսն:
Կենսատու ձայնին մերձեալ ի յունկրն մեռելոյն.
Զմեռեալ շորեքարեայն ոչ արգելին դրժոխք:
Ի դրժոխս կապեալ անձն արագ գայր առ կոչողն,
Կոչողին հրաման լուծանէր գնա ի կապից.
_ Կապելոցն ի դրժոխս ամետի~ս յարութեան:
Յարութեան յուսով ցրնծասցուք եւ մեք այսաւր,
Այսաւր գուարճանամք տանիս ընդ Մարիամանցն:
Մարիամու մասին հաղորդս արա գմեզ, Տէ'ր,
Տիրականդ ոտից ամսմամբ թողութիւն շնորհել,
Շնորհաց քոց անճառից, Յիսու'ս, մատուցուք գփառս:

[ԼԱ] ՓՈԽ

Նոր ամենաց լուր այսար մեզ հընչեաց
Երկնային ձայնին Որդին որոտման.
Բոպէից Տէրն Յիսուս՝ ստեղծողն Ադամայ՝
Սա այսար եկեալ ի Բեթանիայ
Ի յարուցանել ըզչորեքարեայն:
Սաստեաց հրամանաւ մահու բըռնութեան.
Ի կեանքս դարձոյց վերըստին գՂագար
Եւ նովին յուտվ զմեզ անմահացոյց:
Բաբուն իմաստիք սպասեալ յարութեան՝
Գոչեցուք եւ մեր՝ Կենարարին վիա~որ:

[ԼԲ] ՏԱՂ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ

Տիրական տանիս այսաւր եկայք ցընծասցուք,
Բախճանայ այսաւր երկինք անմարմնականաւր:
Նորոգի երկիրս այսաւր գալըստեամբ փրկչին,
Երգս առեալ մանկանցն ոստովք՝ ովսաննա', արհնեալ:
Բաբունին Էից այսաւր եկեալ ի Սիոն,
Սիոնի ցընծան մանկունք ելեալ ընդառաջ:
Երգս երգէ Չաքարիաս դըստեր Սիոնի,
Սիրով խոնարհեալ նըստի նոր յաւանակի:
Ի ծերոց ընծայ բանի ի տղայոց ձայնի,
Երգենք ընդ նոսին ըզփառս գալըստեան քո, Տէ'ր:

[ԼԳ]

ՏԱՂ ՄԵԾԻ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Այսար ըգՏերդ արարիչ որ գաս ի չարչարանս,
Այսար ժողով Հերբայեցոցն խորհին քեզ ը~, մահ:
Այսար Կայիափա խոստովանի գփըրկիչդ աշխարհի,
Այսար իդով ամանիս նըշան պատանացըն քոց:
Այսար յայտնէ Յուդա գախտ արծաթսիրութեան,
Այսար առնու գցանց ըմբռնող զինքըն ի կորուստ:
Այսար՝ ըսկիզբն փրկութեան եւ շընորհաց մերոց:
Այսար արհնենք գեկեալդ կամաւ ի չարչարանս,
Քրիստոս Աստուած յաիտեանս, ամէն:

[ԼԳ]
ՏԱՂ ՄԵԾԻ
ՈՒՐԲԱԹՈՒՆ, ՆԵՐՍԻՍԻ

Ի յուրբաթու մեծի գատկիս,
Գառն անարատ ածեալ ի սպանդ
Լըցեր գաւրէնըս քո ճըշմարտութեամբ զըստուերն:
Յառաւատու յայգոյն ծագեալ,
Արեւ պայծառ գնըշոյլ լուսոյ
Չարչարանացրդ քոց, զարդարեցեր գերկիր:
Ով~ անարատ, ամբիծ Յիսուս,
Կապանաւք պընդեալ տոռամբք,
Որ զպարտական ածար դատաւորաց ի ձեռս:
Երկնային բիրուց բանակք
Սատակել իջին գմարդիկ,
ԸզՏէրն իրեանց տեսեալ մեղաւորաց յատեանն:
Թագաւոր գաւրաց վերնոց,
Դաւանեցեր յայտնի ըզնոյն,
Յոր եւ ծընեալ եղեր նախքան զարեւ անուն:
Ի Պիղատոսի յատեանն
Արքայդ երկնից կացեր
Եւ սպասաւորաց քոց զհոյլսն ոչ մարտընչել թողեր:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.